Հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի 2022 թվականի հոկտեմբերի 5-ից 7-ը Կազան քաղաք (Ռուսաստանի Դաշնություն) պաշտոնական գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը՝ *Արմեն Ղուլարյան*

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետը՝ *ք.* Կազան, Ռուսաստանի Դաշնություն, 2022 թվականի հոկտեմբերի 5-ից 7-ը:

4. Հրավիրող կողմը՝ Ռուսաստանի Դաշնության շինարարության և բնակ-կոմունալ տնտեսության նախարարություն (Ռուսաստանի Դաշնության շինարարության և բնակարանային և կոմունալ տնտեսության նախարար Իրեկ Ֆայզուլինի նամակ-հրավերով):

5. Գործուղման նպատակը՝ մասնակցել ԱՊՀ անդամ-պետությունների շինարարության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհրդի հերթական 43-րդ նստաշրջանին և Եվրասիական շինարարական կոնգրեսին:

6. Քննարկված թեմաները՝

Քննարկված թեմաներն էին.

- ԱՊՀ անդամ պետությունների աշխատանքը սեյսմակայուն շինարարության ոլորտում,
- շինարարության, ճարտարապետության և քաղաքաշինության ոլորտներում իրականացվող քաղաքականության և հետագա զարգացման ծրագրերը,
- շինարարության ոլորտում գնագոյացման համակարգի բարելավման գործընթացը, և այն:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝

2022 թվականին կայացած ԱՊՀ անդամ-պետությունների շինարարության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհրդի հերթական 43-րդ նստաշրջանին հանդես եմ եկել ողջույնի խոսքով և զեկույցով:

Տեղեկատվություն եմ ներկայացրել Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականին կատարված լայնածավալ շինարարական աշխատանքների, տնտեսական

աճի, Հայաստանի Հանրապետությունում 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի, դրանց հասնելու միջոցառումների, ակնկալվող արդյունքների և ժամկետների վերաբերյալ, ինչպես նաև օրենսդրական ոլորտում նորմատիվ իրավական փաստաթղթերի մշակման ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Անդրադարձ եմ կատարել քաղաքաշինական գործունեության, դրանց լիցենզավորման, մոնիտորինգի և կարգավորման խնդիրներին, թվային տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը, օրենսդրական ոլորտում նորմատիվ իրավական փաստաթղթերի մշակման ուղղությամբ թույլտվություն չստացած անձանց ինքնաբուխ շինարարական աշխատանքների կանխարգելմանը և այն:

Եվրոպական շինարարական կոնգրեսին ևս խոսել եմ միջազգային ստանդարտների ներդաշնակեցման հետ կապված հարցերի շուրջ, որոնք սերտորեն կապված են և փոխազդում են Հայաստանի Հանրապետության տարածքում օրենսդրորեն հաստատված շինարարական արտադրության նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ կառուցապատողների ակտիվ գործունեության հետ:

Նշել եմ նաև շինարարության ոլորտում ներդրվող տեխնոլոգիաների համապատասխանության, կարգավորող և տեխնիկական փաստաթղթերի և ստանդարտների մասին:

Նստաշրջանի և Կոնգրեսի ընթացքում հանդիպումներ և առանձնազրույցներ եմ ունեցել Ռուսաստանի Դաշնության շինարարության և բնակարանային և կոմունալ տնտեսության նախարար Իրեկ Ֆայզուլինի, Նախարարի առաջին տեղակալ Ալեքսանդր Լոմակինի, Ուզբեկստանի Հանրապետության շինարարության նախարար Բատիռ Զակիրովի, Ղազախստանի Հանրապետության շինարարության և ճարտարապետության գիտահետազոտական և նախագծային ինստիտուտի տնօրեն Բեգման Կուլբիևի, Բելառուսի Շինարարության գնագոյացման հանրապետական գիտատեխնիկական կենտրոնի Հանրապետական ունիտար ձեռնարկության տնօրեն Գենադիյ Պուրսի և ԱՊՀ անդամ-պետությունների այլ ներկայացուցիչների հետ՝ մեր երկրների միջև համապատասխան ոլորտներում հետագա կապերի առավել ակտիվացման նպատակով:

Շինարարական կոնգրեսի բացման արարողության ժամանակ ծանոթացել եմ Թաթարստանի Հանրապետության նախագահ Ռուստամ Միննիխանովի և նախագահին կից Պետական բնակարանային ֆոնդի ղեկավար Մուրատ Զարիպովի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ձեռք են բերվել մի շարք որոշումներ.

- ԱՊՀ մասնակից պետությունների բազային կազմակերպության աշխատանքի մասին սեյսմակայուն շինարարության բնագավառում /հանդես եմ եկել զեկույցով/,
- Շինարարական գործունեության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհրդի և պրոֆիլային բազային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետության բարձրացման մասին,
- Միջկառավարական խորհրդի XLIV նիստի անցկացման վայրի, ժամկետների և օրակարգի մասին,
- Միջկառավարական խորհրդի աշխատանքների ծրագրերը հաստատելու մասին,
- Շինարարական գործունեության մեջ համագործակցության միջկառավարական խորհրդի քարտուղարության հիմնադրույթը հաստատելու մասին,
- Վերանայման, արդիականացման և կատարելագործման սկզբունքային մոտեցումները «Շինարարությունը սեյսմիկ գոտիներում»,
- Շինարարական համալիրում տեխնիկական կարգավորման խնդիրների վերաբերյալ ԱՊՀ մասնակից պետությունների բազային կազմակերպության աշխատանքի մասին,
- Շինարարական գործունեության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհրդի և պրոֆիլային բազային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետության բարձրացման մասին,
- Շինարարության մեջ գնագոյացման համակարգի կատարելագործում և զարգացման հեռանկարների մասին,

- ԵԱՏՄ «Շինանյութերի և արտադրատեսակների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի նախագծի մասին,
- Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի քաղաքաշինության ոլորտի ընթացիկ ծրագրերի և բարեփոխումների մասին,

9. Գործուղվող՝ ***Արմեն Ղուլարյան***

10. Ամսաթիվը՝ ***13.10.2022թ.***